2019, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (534)

Էջմիածնի Կաթողիկոսություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի՛ հավատավոր զավակներ մեր,

Խոր մտահոգությամբ ենք հետեւում անցնող մի քանի ժամերին Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակին:

Մեր երկրում ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ օրինահարգության ամրապնդման ուղղությամբ արձանագրված հաջողությունները հնարավոր է պահպանել ու զորացնել միայն եղբայրության եւ սիրո ոգու ամրապնդմամբ:

Կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զավակներին՝ ցուցաբերել հանդարտություն, զերծ մնալ բռնություններից, խաղաղությամբ, ազգային միասնության ոգով եւ միմյանց նկատմամբ սիրով առկեցուն ներդնելու բոլոր ջանքերը՝ հաղթահարելու համար մեր առջեւ ծառացած մարտահրավերները:

Մենք հավատում ենք, սիրելի՛ զավակներ մեր, ձեր ողջախոհությանը եւ հայրենիքի ապագայի հանդեպ ձեր պատասխանատվության բարձր գիտակցությանը:

Հայրապետիս աղոթքն է, որ օրհնյալ մեր երկրի մեջ փոխըմբռնման եւ համերաշխության միջոցով, Տիրոջ օգնականությամբ լուծվեն առկա բոլոր տարաձայնություններն ու հակառակությունները:

Երկնառաք օրհնություն եւ աստվածային իմաստություն ամենքիս:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ Հանրապետության օրվա առիթով:

Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումն իրականություն դարձավ մայիսյան հերոսամարտերում մեր հայրերի քաջագործություններով: Նրանց փառապանծ հաղթանակը դարձավ հիմքը մեր անկախ պետականության վերահաստատման, որը դարավոր երազանքն էր մեր ժողովրդի:

Հանուն հայրենիքի, մեր ինքնության ու պետականության համար պայքարած խրոխտ հայորդիների սխրանքը, ազգի ու մեր սրբությունների հանդեպ սիրո եւ հավատարմության վկայությունը պատգամ է յուրաքանչյուրիս՝ լինել արժանավոր ու նվիրյալ զավակը ազգի եւ հայրենյաց: Սիրելինե՛ր, այսօր էլ նույն ոգով, միասնականությամբ կարող պիտի լինենք պահպանել մեր անկախ պետականությունը, Հայաստանում եւ Արցախում մեր ձեռքբերումները՝ վաղվա օրվա լավատեսությամբ շարունակելով զարգացող երկիր կառուցել եւ կերտել շեն ու լուսավոր մեր ապագան:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ երկնավոր Տերը զորացնի եւ անսասան պահի հայրենի մեր պետականությունն ու օգնական լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ արգասավորելով ի սեր հայրենյաց բոլորիս ջանքերն ու իրագործումները:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 մայիսի

Շվեյցարիայի Կարմիր խաչի ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շվեյցարիայի Կարմիր խաչի ներկայացուցիչներին՝ ուղեկցությամբ Հայաստանում շվեյցարական Կարմիր խաչի ներկայացուցիչ Ջինա Սարգիզովայի:

Իր գնահատանքը հայտնելով Կարմիր խաչի միջազգային կազմակերպության ներկայացուցիչներին՝ աշխարհի տարբեր երկրներում մարդասիրական օրինյալ գործունեություն ծավալելու համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց կազմակերպության կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը եւ կարիքի մեջ գտնվող անձանց ցուցաբերվող աջակցությունը:

Այս առիթով Նորին Սրբությունն անդրադարձավ Մայր Աթոռի կողմից նախաձեռնված բարեգործական եւ սոցիալական նույնաբնույթ ծրագրերին, ինչպես նաեւ միջազգային տարբեր կազմակերպությունների հետ ձեւավորված գործակցությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կարմիր խաչի ներկայացուցիչների ուշադրությանը հանձնեց նաեւ 2018 թ. ամռանը, անհայտ պայմաններում, Ադրբեջանի տարածքում հայտնված Հայաստանի Տավուշի մարզի Բերդավան գյուղի բնակիչ Կարեն Ղազարյանին հայրենիք վերադարձնելու խնդիրը՝ տեղեկացնելով նաեւ Մայր Աթոռի կողմից այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը:

Վերջում Հայոց Հայրապետը Կարմիր խաչի ներկայացուցիչներին մաղթեց արդյունավոր առաքելություն Հայաստանում:

Հաղթանակի զորավարների հիշատակի հիմնադրամի ներկայացուցիչներին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հաղթանակի զորավարների հիշատակի հիմնադրամի ներկայացուցիչներին եւ Երկրորդ աշխարհամարտի հրամանատարների ժառանգներին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի հայերի միության անդամների:

Ռուսաստանի հայերի միության առաջին փոխնախագահ Լուսիկ Ղուկասյանը եւ Հաղթանակի զորավարների հիշատակի հիմնադրամի նախագահ Նատալյա Կոնեւան Նորին Սրբությանը ներկայացրեցին Հայաստան ժամանած խմբին, որի մեջ էին նաեւ մարշալ Հովհաննես Բաղրամյանի եւ մարշալ Համազասպ Բաբաջանյանի ժառանգները, անդրադարձան հիմնադրամի առաքելությանը եւ իրականացվող ծրագրերին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց հիմնադրամի անդամներին՝ ողջունելով հիմնադրամի գործունեությունն ի պանծացումն հաղթանակը կերտած հերոսների: Իր խոնարհումը բերելով նրանց՝ Նորին Սրբությունը կարեւոր նկատեց բոլոր այն քայլերը, որոնց շնորհիվ Երկրորդ աշխարհամարտում հերոսաբար զոհվածների եւ մարտնչածների հիշատակը կապրի հավերժ: Հայոց Հայրապետն ընդգծեց, որ այդ հիշատակը սուրբ եւ նվիրական է, այն պետք է պահել եւ փոխանցել հետագա սերունդներին:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաեւ պատերազմում հայ ժողովրդի կարեւոր մասնակցությանը, ինչպես նաեւ ի զորակցություն բանակի՝ Հայոց Եկեղեցու գործադրած ջանքերին, որոնց արդյունքում ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը:

Խոսելով հայ եւ ռուս ժողովուրդների բազմադարյա բարեկամության մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց, որ Երկրորդ աշխարհամարտում արձանագրված հաղթանակն առավել եւս ամրապնդեց այդ եղբայրությունը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նման ձեռնարկները, ինչպիսին հիմնադրամի նախաձեռնությունն է, պիտի առավել սերտացնեն առկա ջերմ կապերը:

Վերջում Նորին Վեհափառությունը մաղթեց, որ հավատակից երկու ժողովուրդները շարունակեն նույն ոգով զորացնել իրենց հարաբերությունները՝ ապրելով Աստծու օրհնության ներքո՝ խաղաղության ու բարօրության մեջ:

15 մայիսի

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին

«Արցախը սրբություն է, այնտեղ պատիվն է մեր ժողովրդի».
Գարեգին Բ Կաթողիկոս

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ տիար Աշոտ Ղուլյանի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ տիար Վլադիմիր Վարդանյանի: Արցախյան պատվիրակությունը Հայաստան էր ժամանել ՀՀ ԱԺ եւ ԱՀ ԱԺ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի հերթական նիստի առիթով:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց միջխորհրդարանական այս հանդիպումները, որոնց ընթացքում համատեղ քննարկվում են Արցախի առջեւ ծառացած հարցեր, որպեսզի միասնական ջանքերով հաղթահարվեն բոլոր մարտահրավերները, պաշտպանվեն արցախահայության արդար իրավունքները, եւ գտնվեն հակամարտության խաղաղ կարգավորման ուղիներ:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին

Սկիզբը՝ էջ 1

Այդ գործընթացում Նորին Սրբությունը հրամայական նկատեց միասնականությունը եւ համագործակցությունը:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց Եկեղեցին իր հերթին կարելի է անում՝ նպաստելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը, միջեկեղեցական եւ միջազգային տարբեր հարթակներում մշտապես բարձրաձայնում արցախյան հիմնախնդրի մասին: Գարեգին Բ Կաթողիկոսը հավաստիացրեց, որ Արցախը միշտ իր աղոթքների մեջ է, Հայոց Եկեղեցին՝ Արցախի կողքին՝ պատրաստակամ աջակից լինելու արցախցուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ Արցախով ոգեշնչվում եւ խանդավառվում է աշխարհասփյուռ մեր ողջ ժողովուրդը, որի համախմբման եւ միավորման գործում Արցախը կարեւոր դերակատարություն ունի: Անդրադառնալով Արցախ կատարած հովվապետական այցելություններին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ միշտ վերադառնում է մխիթարված եւ գոտեպնդված՝ տեսնելով արցախցու հավատավոր եւ քաջարի ոգին, որով անառիկ է պահում երկրի սահմանները: Հայրապետի խոսքի համաձայն՝ արցախահայության զորավոր ու դարերի խորքից եկող հավատքը, լավատեսությունը եւ քաջազնությունը հաղթական կամքի ոգի են կերտում ողջ ազգի հոգում:

Իր հերթին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, շնորհակալություն հայտնելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Արցախի եւ նրա ժողովրդի հանդեպ ցուցաբերվող մշատական հոգածու վերաբերմունքի եւ ուշադրության համար, տեղեկացրեց միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովի հերթական նիստի օրակարգում քննարկված հարցերի, տարածաշրջանի ընդհանուր խնդիրների եւ մտահոգությունների մասին: Աժ նախագահը կարեւոր նկատեց առկա համագործակցությունը՝ ի խնդիր ազգին հուզող հարցերի լուծման, համազգային ծրագրերի իրագործման:

Խոսելով Արցախի ժողովրդի հոգեւոր կյանքի մասին՝ պրն Ղուլյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ապրիլի 7-ին Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու բացման եւ օծման արարողությունը հանդիսապետելու համար՝ հավելելով, որ այն մեծ խանդավառություն է առաջացրել ժողովրդի շրջանում:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ արցախահայությունն ապրի խաղաղության մեջ եւ միշտ հաղթական լինի թե՛ հայրենաշինության, թե՛ հայրենիքի արդար պայքարի մեջ: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց ամենազոր Աստծուն սիրո եւ միասնության մեջ պահել մեր ժողովրդին, որպեսզի միշտ հզոր լինի եւ կարողանա իրականության առաջնորդել իր իղձերն ու երազները:

16 մայիսի

«Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի 10-րդ եւ 11-րդ դասարանների չորս աշակերտների՝ ուղեկցությամբ դպրոցի տեսուչ, Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանի եւ դպրոցի տնօրեն տիկին Սուսաննա Վարդանյանի:

Տեսուչ հայր սուրբը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ կրթական հաստատության հանդեպ ցուցաբերվող մշտական ուշադրության եւ հայրական խնամքի համար, տեղեկացրեց, որ Վեհափառ Հայրապետի կողմից հռչակված Ընտանիքի տարվա շրջանակներում, մայիսի 15-ին՝ Ընտանիքի միջազգային օրը, դպրոցում կազմակերպվել էր միջոցառում ծնողների համար՝ նպատակ ունենալով նրանց ուշադրությունը հրավիրել ընտանեկան արժեքներին, ինչպես նաեւ աշակերտներն այցելել էին ապրիլյան քառօրյայում զոհված զինվորի ընտանիքի անդամներին եւ հանդիսություն կազմակերպել «Քյուրքչյան» խնամքի կենտրոնի երեխաների համար: Այդ արժեքների զորացման գործում հայր Զաքարիան կարեւորեց եկեղեցու կրթադաստիարակչական առաքելությունը՝ ընդգծելով, որ որքան հզոր եւ ամուր է ընտանիքը, այնքան ուժեղ են ժողովուրդն ու պետությունը:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով աշակերտներին, ընդգծեց դպրոցականների եւ երիտասարդության մեջ ընտանեկան եւ հոգեւոր-բարոյական արժեքների սերմանման կարեւորությունը՝ հորդորելով նրանց ամեն ջանք գործադրել՝ լավ մարդ եւ քրիստոնյա լինելու համար: Նորին Սրբությունը նշեց, որ դարերի ընթացքում հայի համար ընտանիքն ընկալվել է իբրեւ փոքրիկ դրախտ եւ սրբություն, պատմության ընթացքում այդ հաստատուն հենքի շնորհիվ են կերտվել հաղթանակները, արձանագրվել ձեռքբերումներն ամենատարբեր ոլորտներում: Խոսելով քրիստոնեական ավանդական ընտանիքի արժեհամակարգը խաթարող ժամանակակից մարտահրավերների եւ երեւույթների մասին՝ Նորին Սրբությունը կարեւոր համարեց հասարակության՝ ամուր ընտանեկան եւ բարոյական արժեքներով դաստիարակությունը:

Հանդիպմանը Հայոց Հայրապետն աշակերտներից հետաքրքրվեց նրանց ուսումնական ընթացքով, նախասիրություններով եւ դպրոցում առկա պայմաններով:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց աշակերտներին, նվերներ ընծայեց՝ ի գնահատություն ուսումնառության մեջ նրանց արձանագրած հաջողությունների:

17 մայիսի

«Եկեղեցիների համատեղ գործողություն» դաշինքի գլխավոր քարտուղարին

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց «Եկեղեցիների համատեղ գործողություն» դաշինքի (ACT Alliance) գլխավոր քարտուղար Ռուդելմար Բուենո դե Ֆարիային՝ ուղեկցությամբ ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Մուշեղ եպս Բաբայանի եւ գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի:

Դաշինքի գլխավոր քարտուղարը Նորին Սրբությանը ներկայացրեց կազմակերպության գործունեությունը՝ տեղեկացնելով, որ այն մարդասիրական առաքելություն է իրականացնում ավելի քան 125 երկրներում եւ միավորում է ավելի քան 150 հավատքահեն ու եկեղեցապատկան կառույցներ եւ եկեղեցիներ: Վերջինս նշեց նաեւ, որ դաշինքը, բացի աղետներին արագ արձագանքումից, շահերի պաշտպանության եւ զարգացման ծրագրերից, տարբեր ոլորտներում օգնություններ է ցուցաբերում հակամարտության մեջ ներքաշված եւ բնական աղետներից տուժած երկրներին՝ ի մասնավորի նաեւ բռնության ենթարկված քրիստոնյաներին: Այս առումով պրն դե Ֆարիան ընդգծեց, որ դաշինքը սերտ փոխգործակցում է Միացյալ ազգերի կազմակերպության եւ տարբեր երկրներում ու տարածաշրջաններում դաշինքի անդամ կազմակերպությունների հետ:

«Եկեղեցիների համատեղ գործողություն» դաշինքի եւ «Կլոր սեղանի» միջեւ առկա գործակցության առիթով իր գոհունակությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ կարեւորելով դաշինքի առաքելությունն արտակարգ իրավիճակների հաղթահարման գործում: Նորին Սրբությունը ողջունեց դաշինքի համագործակցությունը տարբեր եկեղեցական կառույցների հետ՝ նշելով, որ դա նպաստում է նպաստելով ժողովրդի բարօր ու բարգավաճ կյանքի կերտմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ դաշինքի գլխավոր քարտուղարը խոսեցին նաեւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ գործադրվող ջանքերի եւ այդ գործընթացում Հայ Եկեղեցու ներգրավվածության մասին: Նորին Սրբությունը ողջունեց դաշինքի առաջարկը՝ ԵՀԽ-ի հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի հետ միասին համաժողով անցկացնելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցի շուրջ:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն արդյունավոր առաքելություն մաղթեց գլխավոր քարտուղարին՝ դաշինքի մարդասիրական աստվածահաճո ծառայության մեջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄԷ-ում հանդես եկավ հանդուրժողականության մասին բանախոսությամբ

ՄԱՅԻՍԻ 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Շարժայի պետական տեղեկատվական խորհրդի ընդհանուր նախագահ Շեյխ Սուլթան բին Սիմեդ Ալ Քասիմիի հրավերով, մեկնեց Շարժա՝ մասնակցելու 2019 թվականն իբրեւ ԱՄԷ-ում Հանդուրժողականության տարի հռչակման առիթով կազմակերպված խորհրդի կրոնական նիստին:

Նորին Սրբության շքախմբի մեջ էին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր ԱՄԷ-ի եւ Քաթարի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ Մեսրոպ եպս Սարգսյանը (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն):

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Շարժայի կառավարիչ Շեյխ դոկտ. Սուլթան բին Մուհամմադ Ալ Քասիմիի հետ:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը եւ շնորհակալությունը հայտնեց Շեյխ Ալ Քասիմիին՝ Շարժայի տեղեկատվական պետական խորհրդի կողմից ուղարկված հրավերի համար, ինչպես նաեւ կարեւորեց հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության, կրոնական-մշակութային արժեքների պահպանման ու վերականգնման ուղղությամբ Շարժայի կառավարության կողմից ձեռնարկվող քայլերը:

Մայիսի 20-ի երեկոյան Շարժայի Ալ Մաջազ ամֆիթատրոնում, Շարժայի պետական տեղեկատվական խորհրդի հովանու ներքո գործող Մամուլի ակումբում, Նորին Սրբությունը հանդես եկավ հատուկ բանախոսությամբ՝ ներկայացնելով հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության ընկալումները՝ հիմնված քրիստոնեական վարդապետության եւ հայ ժողովրդի հոգեւոր-ազգային փորձառության վրա:

Ողջունելով Արաբական Միացյալ Էմիրությունների հիմնադիր հայր ու նշանավոր քաղաքական գործիչ Շեյխ Զայիդ բին Սուլթան Ալ Նահյանի տեսլականը, իբրեւ երկրի առաջընթացի երաշխիք, կերտվող հանդուրժողականության եւ խաղաղ համակեցության ստեղծարար ուղի, նաեւ մարդկության կյանքում խաղաղության ու հաճության հաստատմանն ու ամրապնդմանն ուղղված մարդասիրական ջանքերն ու նախաձեռնությունները՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ԱՄԷ-ի նախագահ, Նորին Գերազանցություն Խալիֆ բին Զայիդ Ալ Նահյանին եւ Շարժայի Էմիրության կառավարիչ Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիին, ինչպես նաեւ Շարժայի պետական տեղեկատվական խորհրդի ընդհանուր նախագահ Շեյխ Սուլթան բին Սիմեդ Ալ Քասիմիին կարեւոր այս նիստին մասնակցելու հրավերի համար:

«Հայ ժողովուրդն իր պատմության մեջ շատ փորձություններ, տառապանք ու ցեղասպանություն է տեսել եւ վշտահար հոգու աղոթքով հաճախ է խաղաղություն հայցել երկնքից՝ հայացքն ուղղելով դեպի բիբլիական Արարատ սրբազան լեռը, որը խորհրդանիշ է ջրհեղեղից հետո մարդկության նոր կյանքի վերընձյուղման եւ խաղաղության ավետիսի կենսագործման:

Դարերի հոլովույթում արձանագրված փորձառությունը վկայում է, որ հեշտընթաց չեն հանդուրժողականության ճանապարհները, բայց միշտ՝ հնարավոր, եթե ճշմարտապես ունենք իրար սիրելու եւ համերաշխ համակեցության բարի ձգտումը: Աստված մեկ արյունից է ստեղծել մարդկանց, բոլոր ազգերին. այս հաստատումն է անում Սուրբ Գիրքը՝ մատնանշելով եղբայրասիրության համամարդկային արժեքը (Գործք ԺԷ 26): Մարդկային յուրաքանչյուր էակի հանդեպ Աստծո սերն անխտիր է:

Անհնար է հավատալ ու փառաբանել Աստծուն՝ առանց մարդու կյանքի, նրա աստվածաստեղծ պատկերի ու հիմնարար արժեքների հանդեպ նվիրական զգացումի: Մարդկանց համար հավասար իրավունքների ապահովումը, հետեւաբար, նշանակում է հաստատել Աստծո արարչության մեծագործությունն ու կատարելությունը:

Հանդուրժողականությունը, միաստվածյան կրոնների բարոյական տեսանկյունից, մարդ անհատի մեջ աստվածային պատկերի ու նմանության ներկայությունը տեսնելն ու դրանով իսկ Աստծուն վկայելն է, մարդկային մեծ ընտանիքի մեջ մեր նմանի հետ մշտական երկխոսությունն է, ստորակարգման բացառումը, ազատության իրավաչափ սահմանումը: Քրիստոնեական մտածողության մեջ, դեռեւս Դ դարից սկսյալ, այս մոտեցումը սահմանվել է «միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս, եւ սէր յամենայնի» գաղափարական ընկալումով, որը բոլոր դարերում առաջնորդող է եղել Հայոց Եկեղեցու համար: Հանդուրժողականությունն ըստ այսմ ներկայացվում է համամարդկային խնդիրների առջեւ համընդհանուր ջանքերի մեկտեղման եւ համագործակցության դրսեւորմամբ՝ եղբայրասիրությամբ պահպանելով այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով օժտված են ազգերն ու ժողովուրդները:

Հատկանշական է, որ Հանդուրժողականության տարվա խորհրդանշաններից են իրար միացված ու բացված, դեպի դուրս ուղղված ափերը: Այսպես է նաեւ հանդուրժողականության դեպքում. եթե նրան միացած չեն աստվածայինի հանդեպ նվիրական հավատը, մարդու կյանքի գերագույն արժեքի գիտակցումն ու ազատության սրբազան սկզբունքը, օտարի հանդեպ սերն ու եղբայրությունը, այն չի բացվում ու ծավալվում՝ աշխարհում տարածվելով իբրեւ միասին ապրելու եւ խաղաղ գոյակցելու աստվածային պատգամից բխող հրավեր:

Արդի ժամանակների ընթացքների փոխշաղկապվածության մեջ իրական է դառնում այն պնդումը, թե երկիր մոլորակը փոքրանում է. նրա ամեն անկյունում տեղ գտնող որեւէ մտահոգիչ իրադարձություն դառնում է համընդհանուր լուծման ու ջանքերի կարոտ երեւույթ՝ բարեկարգելու, միասնաբար խնամելու, խաղաղությամբ ու բարօրությամբ զարդարելու մեր ընդհանուր տունը: Ժամանակները փոփոխվել եւ փոփոխվելու են, շարունակ աճելու են մարդու գիտելիքներն ու հնարավորությունները, բայց միշտ արդիական է անհրաժեշտությունը, որ հասարակական գիտակցության մեջ գերակա լինի հանդուրժողականության հոգեւոր-բարոյական ակունքը:

Հավատքն ու բարոյականության ընկալումը Ամենակալը դրել է մարդկանց մեջ՝ իբրեւ յուրահատուկ հնարավորություն Իրեն նմանվելու: Մենք բոլորս Տիրոջ կերտած տանն ենք ապրում եւ գործակիցներն ենք Արարչի»,– նշեց Հայոց Հովվապետը՝ հավելելով, որ, լինելով տարբեր ժողովուրդներ, տարբեր մարդիկ, Աստծո զավակներ են ամենքը՝ կոչված միմյանց կյանքում առատացնելու հոգեւոր պտուղները եղբայրասիրության, խաղաղության, փոխըմբռնումի ու համագործակցության:

Գարեգին Բ Վեհափառն ընդգծեց, որ հանդուրժողականության, փոխըմբռնման ու համագործակցության զորացման ուղղությամբ մարդկության անժխտելի ձեռքբերումներով հանդերձ՝ 21-րդ դարում մեր հասարակությունները բախվում են նորանոր մարտահրավերների՝ դրանցից հատկապես առանձնացնելով հակամարտություններն ու տարաձայնությունները կրոնական լույսի ներքո ներկայացնելու վտանգավոր միտումը: Այս իմաստով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր ու հրամայական նկատեց միջազգային, միջկրոնական-միջմշակութային երկխոսությունների հարթակներում, կրթության ոլորտում, զանգվածային լրատվամիջոցներով հանդուրժողականության ճիշտ մեկնաբանությունն ու մատուցումը:

«Հանդուրժողականության բացակայության, այլեւ դրա խտրական դրսեւորումների պատճառով է, որ մարդկության պատմության մեջ տեղի են ունեցել ողբերգություններ, պատերազմներ ու ցեղասպանություններ, եւ այսօր էլ հաճախ ականատես ենք դառնում ռասայական, կրոնական եւ մշակութային եղեռնագործությունների: Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում բազմիցս բախվել է անհանդուրժողականության ամենատարբեր դրսեւորումներին, որոնցից ամենասարսափելին 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության մեջ իրականացված Հայոց ցեղասպանությունն էր, որն ուղեկցվեց նաեւ մշակութային ցեղասպանությամբ:

Նույն քաղաքականությամբ 20-րդ դարավերջին, երբ հայ ժողովուրդը Ղարաբաղի պատմական իր հողի վրա անկախության հաստատումով հռչակեց ազատ ապրելու իր իրավունքը, Ադրբեջանի կողմից իրագործվեցին հայերի զանգվածային տեղահանություններ ու ջարդեր: Անհանդուրժողականության եւ ատելության հետեւանքը եղավ նաեւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության տարածքում հայկական Ջուղա քաղաքի գերեզմանատան հազարավոր խաչքարերի եւ հայ քրիստոնեական մշակույթի եզակի արժեքների ոչնչացումը: Այսօր սահմանային բախումների հետեւանքով տակավին անմեղ կյանքեր են զոհվում»,– ասաց Նորին Սրբությունը՝ անդրադառնալով նաեւ կայուն խաղաղության վերահաստատման, ժողովուրդների միջեւ փոխըմբռնման եւ հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորման բարի նպատակին ի նպաստ՝ միջազգային ջանքերին, ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի միջնորդական ջանքերով հոգեւոր առաջնորդների հանդիպումներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր երկկողմ հարաբերությունները հարուստ են հանդուրժողականության եւ եղբայրասիրության ազնիվ դրսեւորումներով:

«Հատկապես Հայոց ցեղասպանությունից հետո հարյուր հազարավոր հայ գաղթականներ իրենց ապահով հանգրվանը գտան արաբական աշխարհի հյուրընկալ երկրներում՝ ձեւավորելով խաղաղ համակեցության ու համագործակցության իրական եւ կենսական օրինակ: Այդպիսի վկայություններով են զարդարված նաեւ Շարժայում հայ եւ արաբ ժողովուրդների զավակների կյանքը, միասնական մասնակցությունը երկրի առաջընթացին, եղբայրական բարի հարաբերությունները: Մենք Մեր ժողովրդի զավակների երախտագիտությունն ենք վերստին հայտնում Արաբական Միացյալ Էմիրությունների մեծարգո նախագահին եւ Շարժայի Էմիրության կառավարչին՝ Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիին, որ ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման ոգով եւ ամենայն բարյացակամությամբ զորակցություն են բերում տեղի քրիստոնեական համայնքներին:

Շարունակությունը՝ էջ 4

Քահանայից հերթական ժողով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

ՄԱՅԻՍԻ 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ քահանայից հերթական ժողով, որին մասնակցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Հայաստանի եւ Արցախի թեմերում սպասավորող 225 եկեղեցական՝ թեմական առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ եւ միաբաններ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ հոգեւորականները Ս. Գայանե վանքում մասնակցեցին Գիշերային ժամերգությանը:

Ժողովը բացվեց կազմակերպիչ հանձնախմբի նախագահ Միքայել արք. Աջապահյանի խոսքով: Սրբազան հայրը քահանայից դասին մաղթեց Ավարայրի, Սարդարապատի, հայոց պետականության զորացման ու պայծառացման տեսլականով առաջ ընթացում՝ արձանագրելով նորանոր հաջողություններ հովվական առաքելության մեջ:

Այնուհետեւ «Քահանա-անհատ ճանաչողության եւ հարաբերության հարց» թեմայի շուրջ բանախոսությամբ հանդես եկավ քահանայից ժողովի գործադիր մարմնի անդամ Եսայի քհն. Արթենյանը (Արարատյան հայրապետական թեմ): Բանախոսությանը հաջորդած քննարկման ընթացքում ժողովականներն ընդգծեցին հովվական կյանքում հոգեւոր խնամքի կարեւորությունը՝ հիմնված հովվի հոգեւոր փորձառության, ամուր հավատքի, անսակարկ սիրո եւ նվիրումի վրա: Քահանա-անհատ ճանաչողության պարագայում շահեկան նկատվեցին ծխական համակարգի վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

Ժողովի երկրորդ զեկույցը, «Խոստովանության եւ խոստովանահոր շիտակ ընկալումը Հայոց Եկեղեցում» թեմայով, ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը: Նյութի շուրջ հայր սուրբը հայ եկեղեցական մատենագրությունից եւ կանոնագրքերից քաղված տեղեկություններ փոխանցեց՝ անդրադարձ կատարելով նաեւ այլ եկեղեցիների փորձառությանը: Ծավալված քննարկման ընթացքում քահանա հայրերը խնդրի առնչությամբ ներկայացրեցին իրենց դիտարկումներն ու հովվական բազմափորձությունը:

Ժողովը եզրափակվեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Հայոց Հովվապետն իր գնահատանքը հայտնեց ժողովի մասնակից եկեղեցականներին՝ իրենց նվիրյալ ծառայության համար: *«Մենք միշտ հպարտ ենք մեր եկեղեցականներով: … Այն աշխատանքը, որ նրանք իրականացնում են, իրականացնում են ամբողջական պատասխանատվությամբ, առաջին հերթին՝ հավատքով, աստվածսիրությամբ եւ ազգասիրությամբ, գիտակից, որ իրենց առաքելությունը պայմանավորում է աստվածսիրությունն ու հայրենասիրությունը հայ հավատացյալի, արժեքներ, որոնցով հարատեւել է մեր ժողովուրդը, պահպանվել է մեր երկիրը, որոնցով այսօր մենք ունենք անկախ պետականություն»*,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով դժվարությունների առջեւ չընկրկել, միասնաբար ջանալ հաղթահարել դրանք եւ անշեղ ընթանալ այդ ճանապարհով, նույն քաջարի ոգով, ամբողջական պատասխանատվությամբ շարունակել իրենց ծառայությունը հայ ժողովրդի կյանքում:



Անդրադարձ կատարելով մայիսյան հերոսամարտերին եւ տիրող հաղթական մթնոլորտին՝ Նորին Սրբությունը խոսեց նաեւ մեր ժողովրդի դավանած արժեքների անխաթար պահպանության անհրաժեշտության մասին՝ դրանում կարեւորելով Հայոց Եկեղեցու եւ հայ հոգեւորականի դերակատարությունը: *«Մենք՝ իբրեւ եկեղեցականներ, պետք է ամրորեն, հաստատուն կերպով, քաջաբար պաշտպանենք հոգեւոր, բարոյական մեր արժեքները, որոնք առանցքն են մեր ինքնության, որոնց շնորհիվ հարատեւել ենք դարերի մեջ, դիմակայել ամեն տեսակի փորձությունների, փրկության առաջնորդել մեր ժողովրդին եւ կերտել անկախ պետականություն»*,– ընդգծեց Հայոց Հովվապետը:

Վերջում Նորին Սրբությունը շնորհավորեց եկեղեցականներին Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման օրվա առիթով՝ իր տոնական բարեմաղթանքները փոխանցելով ամենքին:

Հայրական իր օրհնությունը բերելով հոգեւոր դասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ մաղթեց Աստծո զորակցությամբ աննկուն մնալ հավատքի մեջ, հավատարիմ՝ Երկնավորի ու սուրբ հայրերի սահմանած ուղուն: Նորին Սրբությունն աղոթեց հայրենի երկրի խաղաղ ու բարօր կյանքի համար:

Ժողովի ավարտին հոգեւորականաց դասը Ս. Գայանե վանքում մասնակցեց Երեկոյան ժամերգությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄԷ-ում հանդես եկավ հանդուրժողականության մասին բանախոսությամբ

Սկիզբը՝ էջ 3

Առանձնակիորեն ցանկանում ենք անդրադառնալ, որ Շեյխ Սուլթան բին Մուհամեդ Ալ Քասիմիի մարդասիրական մեծահոգի վերաբերմունքի շնորհիվ Շարժայի հայ համայնքն ունեցավ նաեւ իր աղոթավայրը՝ կազմակերպելու համար ազգային-հոգեւոր իր կյանքը: Գոհունակությամբ ու շնորհակալությամբ ենք հիշում դեռեւս 2006 թվականին Նորին Գերազանցություն Շեյխ Սուլթան բին Մուհամմադ Ալ Քասիմիի կողմից Հայաստան կատարված այցի շրջանակներում առնված աստվածահաճո որոշումը՝ վերակառուցելու Հայաստանի նշանավոր վանական համալիրներից Հաղարծնի վանքը՝ իբրեւ հանդուրժողականության եւ կրոնական-մշակութային արժեքների հանդեպ բացառիկ վերաբերմունքի օրինակելի դրսեւորում: Մեր աղոթքներն ու գնահատանքն ենք բերում Նորին Գերազանցությանը մարդասիրության եւ բարեկամության իր ազնիվ ոգու համար:

Հայ ժողովրդի զավակները, սփռված աշխարհով մեկ, ապրելով տարբեր միջավայրերում, հավատարիմ են մնացել եղբայրասիրության ու օտարասիրության աստվածային պատգամին՝ մշտապես հարգելով մյուս ժողովուրդների կրոնական, մշակութային, կենցաղային ավանդույթներն ու սովորույթները, եւ իրենց կարեւոր նպաստն են բերում բարի առաջընթացին հյուրընկալ երկրների, որոնց ազնիվ եւ օրինապահ քաղաքացիներն են: Ասվածի լավագույն վկայությունն են ինչպես Շարժայում, այնպես եւ արաբական, մահմեդական երկրներում դարեր ի վեր եղբայրասիրության մեջ ապրող հայ համայնքները: Համերաշխության ու խաղաղ համակեցության վկայություն են նաեւ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի կենտրոնում գործող Կապույտ մզկիթը, կրոնական տարբեր հարանվանությունները, որոնք ապրում են Հայաստանում՝ պահպանելով ու արդյունավորելով իրենց հոգեւոր-ազգային կյանքը»,– նշեց Վեհափառ Հայրապետը:

Վերջում իր գնահատանքը հայտնելով միջոցառման կազմակերպիչներին եւ ողջունելով Հանդուրժողականության տարվա շրջանակներում կրոնների ու մշակույթների, ժողովուրդների ու քաղաքակրթությունների միջեւ երկխոսության խթանմանը, փոխըմբռնման ու համագործակցության ոգու ամրապնդմանը ծառայող քայլերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայցեց Բարձրյալից, որ հանդուրժողականությունը աշխարհում առատ պտուղներ բերի եւ մարդկության կյանքը զարդարի սիրո, խաղաղության ու ստեղծարար ընթացքի բարի արգասիքներով:

Բանախոսությունից հետո Նորին Սրբությունը պատասխանեց նաեւ ներկաների հարցերին ու քննարկման արդյունքում առաջացած հարցադրումներին:

Եպիսկոպոսական ուխտի պատարագներ Ս. Գայանե վանքում

ՄԱՅԻՍԻ 14-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Ս. Գայանե վանքում իր եպիսկոպոսական ուխտի Պատարագը մատուցեց Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակ Տիրան եպս Պետրոսյանը, որը եպիսկոպոսական ձեռնադրության ու օծման էր արժանացել մայիսի 12-ին:

Պատարագին ներկա էին Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբաններ, եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ՝ Կենտրոնական Եվրոպայի եւ Շվեդիայի հայրապետական պատվիրակությունից, Ավստրիայի Ասորի Ուղղափառ Եկեղեցու հոգեւոր հովիվ քորեպիսկոպոս Էմմանուել Այդինը, Վիեննայի համալսարանի կաթոլիկ աստվածաբանության ֆակուլտետի ծիսագիտության եւ խորհուրդների աստվածաբանության ամբիոնի վարիչ դոկտոր Հանս Յուրգեն Ֆոյլները եւ ուխտավոր հայորդիներ:

Իր քարոզում Տիրան սրբազանը խոսեց եպիսկոպոսական բարձր եւ չափազանց պատասխանատու ասնարհումը բերեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իրեն եպիկոպոսական շնորհին արժանացնելու համար՝ մաղթելով Հայոց Հորը երկար տարիների արեւշատ եւ եկեղեցաշեն գահակալություն: Տիրան եպիսկոպոսը նաեւ իր երախտագիտությունը հայտնեց Մայր Աթոռի միաբանությանը, լուսարարապետությանը եւ հոգեւոր կրթական հաստատություններին՝ իր հոգեւոր նկարագրի կերտման գործում մեծ ներդրում ունենալու համար: Ս. Պատարագի ավարտին ուխտավորները վերստին շնորհավորեցին սրբազան հորը՝ եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման առիթով:

ՄԱՅԻՍԻ 19-ին՝ Սուրբ խաչի երեւման տոնի օրը, կրկին Սուրբ Գայանե վանքում այս անգամ եպիսկոպոսական ուխտի իր անդրանիկ Պատարագը մատուցեց մայիսի 12-ին եպիսկոպոսական ձեռնադրության ու օծման արժանացած Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե եպս Իսախանյանը:

Սրբազան արարողության ընթացքում Սերովբե սրբազանն անդրադարձ կատարեց տոնի հաստատմանը եւ Տիրոջ սուրբ նշանի խորհրդին:



«Եթե բառացի իմաստով այսօր խաչ ենք վերցնում մեր ուսերին, պետք չէ մոռանանք, որ կա նաեւ հոգեւոր խաչը, որ քրիստոնյայի համար առաջին հերթին իր քրիստոնեական հավատքից բխող ճշմարտությունն է, որ մենք պետք է առնենք մեր ուսերին եւ ապրենք ճիշտ ու ուղիղ, մեր կենսակերպը դարձնենք հայելին մեր քրիստոնեական հավատքի՝ թե՛ իբրեւ անհատ, թե՛ իբրեւ հասարակություն»,– նշեց սրբազանն իր քարոզում՝ հաստատելով, թե որեւէ մեկը չի կարող պնդել, թե ինքը քրիստոնյա է, սիրում է Աստծուն, սակայն չարություն եւ ատելություն է սերմանում, ճշմարտության ու արդարության վեհագույն գաղափարները շահարկում:

«Տարվա մեջ մեր Եկեղեցին խաչին չորս օր է նվիրել ու իր հավատացյալներին, մանավանդ՝ այդ օրերին, ինչպես, օրինակ, այսօր, երբ մենք նշում ենք Սուրբ խաչի երեւման տոնը, հրավիրում է ակնածանքով խոնարհվելու խաչի եւ խաչյալի առջեւ եւ անդրադարձ կատարելու, թե ինչ է խաչը մեզ համար: Ունի՞ այն մեզ համար որեւէ նշանակություն, թե՞ մի գեղեցիկ զարդ է եւ կամ առավելագույնը՝ անվանապես մեր քրիստոնյա կոչվելու արտաքին ցուցադրության միջոց: Եվ այս հարցի պատասխանը յուրաքանչյուրը պետք է փնտրի իր համար: …Այդ պատասխանը պետք է լինի ոչ թե մեր շուրթերին, այլ թաքնված պետք է լինի մեր սրտում եւ երեւա մեր ապրած կյանքի ու կենսակերպի մեջ, մարդկանց նկատմամբ մեր ունեցած կեցվածքի ու վերաբերմունքի մեջ»,– ասաց պատարագիչ սրբազանը:



Սերովբե եպիսկոպոսն ընդգծեց, որ օրն իր համար նվիրական է, քանի որ մատուցում է եպիսկոպոսական ուխտի իր անդրանիկ Պատարագը: Այս առիթով նա իր սերն ու հավատարմությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ապա դիմելով հոգեւորականաց դասին ու ներկա հավատավոր ժողովրդին՝ խնդրեց մշտապես հիշել նաեւ իրեն՝ իրենց աղոթքներում:

…Արդարեւ, մենք եւս պատրաստ ենք մեր անձը դնելու Տիրոջ ծառայության գործին՝ անսալով Նրա խոսքին եւ վստահելով Նրան: Աստված էլ մեր մեջ կարող է հրաշքներ գործել: Միանշանակ է, երբ առանց տարակուսելու վստահում ենք մեր Աստծուն, Նա մեր հոգու մեջ նոր հորիզոններ է բացում՝ գործակիցը դարձնելով Իր սուրբ առաքելության»,– ընդգծեց սրբազան հայրը՝ հաստատելով, որ ամեն օր, ամեն վայրկյան Աստված կանչում է բոլորին, բայց ոչ թե ստանալու, վերցնելու, այլ տալու համար, ու տալիս է առատորեն եւ լավագույնը:

Իր խոսքում Տիրան եպիսկոպոսն անդրադարձավ նաեւ Սուրբ Էջմիածնի խորհրդին ու առաքելությանը՝ մասնավորապես շեշտելով. *«Շատ հաճախ են ասում, որ Էջմիածինն ունի առաքելություն. ստիպված եմ մի փոքր խմբագրել եւ ասել՝ Էջմիածինը չունի առաքելություն, Էջմիածինն ինքն առաքելություն է: Սուրբ Էջմիածինը մեր ազգի խարիսխն է, մեր ինքնության կորիզը: Հարց են տալիս մեզ՝ ինչու է այդպես: Մենք աշխարհով մեկ ունենք հարյուրավոր եւ հազարավոր հրաշալի կոթողներ՝ տաճարներ, եկեղեցիներ, որտեղ բնակվում է Աստված, ուր մենք գնում ենք Նրա հետ հանդիպման: Բայց Սուրբ Էջմիածինն ուրիշ նշանակություն ունի: Ինչո՞ւ է այդպես. որովհետեւ Տերը երկու անգամ իջավ աշխարհ՝ մեկը՝ Երուսաղեմ, իսկ մյուսը՝ Էջմիածին. այս վայրն ընտրեց Աստծո Որդին իբրեւ հանդիպման վայր Իր ընտրյալ ժողովրդի՝ հայերիս հետ: Դրա շնորհիվ է, որ մեզ համար մեծ սրբություն է Էջմիածնի խորհուրդը»:*

Վերջում պատարագիչ սրբազանն իր որդիական խոնարհությամբ հրավիրեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԱՍՏԾՈ ՄԱՐԳԱՐԵՆ

«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացեք եւ ուրախացեք, որովհետեւ երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզանից առաջ են եղել»
(Մատթ. Ե 11):



«Մարգարե» բառը ծագում է պահլավերեն margar եւ զենդերեն mādran՝ «կանխասաց, կանխագուշակ»-ից: Մարգարեներին բացառիկ դեր էր վերապահված հատկապես Հին Կտակարանում. հրեաների համար որոշիչ ու կարեւոր նշանակություն ունեին նրանց խոսքն ու գործը: Մարգարեները հայտնում էին Արարչի կամքը, փոխանցում Նրա պատվիրանները, հրահանգները, կարգադրություններն ու վճիռները (հմմտ. Դ Թագ. Դ 22, ԺԷ 13, Երեմ. ԻԵ 4): Երկնային Հայրը նրանց միջոցով էր խոսում Իր ժողովրդի հետ: Մարգարեները կոչված էին նաեւ պահպանելու պետության աստվածակենտրոն կառուցվածքը, ուստի գործուն մասնակցություն էին ցուցաբերում երկրի հասարակական-քաղաքական կյանքում, հաճախ ընդդիմանում էին ամբարտավան եւ մեղսագործ կառավարիչներին, տիրակալներին: Նրանք մշտապես պայքարում էին աստվածադիր սկզբունքների իրագործման համար, այդ իսկ պատճառով հալածվում եւ նահատակվում էին *(հմմտ. Մատթ. ԻԳ 34–37, Եբր. ԺԱ 32–38, Հակոբ. Ե 10)*:

Մարգարեներին ընտրում էր Աստված. նրանք լիովին տարբերվում էին իրենց ժամանակաշրջանի մարդկանցից՝ խոնարհ էին, հնազանդ, ազնիվ, անսասան հավատ ունեին, խստակյաց, անձնվեր եւ արդար էին *(հմմտ. Դ Թագ. Ա 8, Զաք. ԺԳ 4, Մատթ. Գ 4, Դ Թագ. Ե 15–16)*:

Աստվածաշունչ մատյանում առանձնահատուկ ու կարեւոր տեղ են զբաղեցնում մարգարեական գրքերը. դրանք տասնվեցն են: Մարգարեներից չորսը՝ Եսային, Երեմիան, Եզեկիելը եւ Դանիելը կոչվում են Մեծ, իսկ մնացյալ տասներկուսը՝ Փոքր մարգարեներ: Հայ թարգմանական եւ ինքնուրույն հեղինակային մատենագրության մեջ առանձնակի արժեք ունեն մարգարեական գրքերի մեկնությունները, որոնք հայ մեկնողական գրականության անքակտելի մասն են կազմում:

Մարգարեական գրքերում առկա են արժեքավոր տեղեկություններ, որոնք ուշագրավ են Հայոց պատմության ուսումնասիրման տեսանկյունից. այսպես՝ Եսայի մարգարեի գրքում հիշատակվում է Արարատի երկիրը, որտեղ փախչում են Ադրամելեքն ու Սարասարը (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համաձայն՝ Ադրամելեք եւ Սանասար)՝ իրենց հորը՝ Ասորեստանի արքա Սենեքերիմին (Ք. ծ. ա. 705–680 թթ.) սպանելուց հետո *(տես Ես. ԼԷ 37–38, Դ. Թագ. ԺԹ 36–37)*: Մեկ այլ գրքում՝ Երեմիայի մարգարեության մեջ, հիշատակվում է «Արարատյան թագավորությունը» (ԾԱ 27). թերեւս խոսքը Երվանդունիների արքայատոհմի հիմնած հայկական նորաստեղծ պետության մասին է: Եզեկիելի մարգարեական գրքում վկայակոչված «Թորգոմի տունը», ըստ մասնագետների, գտնվում էր Երկրորդ Հայքի տարածքում *(տես «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 699)*:

Այսօր, երբ արդի մարդուն հազարամյակներ են բաժանում հինկտակարանյան ժամանակներից, երբ նորագույն շրջանի անհատի առջեւ ծառացել են հոգեւոր ու նյութեղեն բազմաթիվ խնդիրներ եւ մարտահրավերներ, մարգարեական գրքերն ասես յուրատեսակ հետաքրքրություն են առաջացնում: Դրանցից յուրաքանչյուրն աստվածընտրյալ մի անձի պատմություն է, որտեղ արտացոլված են վերջինիս կյանքն ու գործունեությունը, կատարած հրաշքները, աննկարագրելի հալածանքները եւ նահատակությունը: Եվ իրապես զարմանում ենք, թե ինչպես էին նրանք Աստծո հանդեպ աներեր հավատով ու աներկյուղ նվիրումով հաղթահարում բոլոր փորձությունները, լռելյայն կրում անասելի չարչարանքները…

Հայ մատենագրության մեջ առկա մեկնողական երկերի մի ստվար մասը հիմնականում վերաբերում է Մեծ մարգարեների գրքերին, ուստի որոշեցինք այս անգամ անդրադառնալ Փոքր մարգարեներից մեկին՝ Ամոսին:

Հին Կտակարանի համաձայն՝ Ամոս մարգարեն Թեկուա բնակավայրից էր, որը գտնվում էր Հուդայի թագավորությունում՝ Բեթղեհեմից ոչ հեռու: Նա նշանավոր եւ հարուստ ընտանիքից չէր, սակայն, ինչպես հայտնի է, Աստված ընտրում է ոչ թե հարուստին ու զորեղին, այլ՝ ընչազուրկին եւ խոնարհին:

Եսային, Օսեեն եւ Ամոսը համարվում են առաջին մարգարեներն ու սրբազան գրքերի հեղինակները: Մարգարեներից միայն Օսեեն ու Ամոսն են քարոզել Հյուսիսային թագավորությունում: Մինչ Աստծո կողմից մարգարե ընտրվելը՝ Ամոսը հովիվ էր. այս է վկայում նրա՝ Բեթելի քուրմ Ամասիային տված պատասխանը *(հմմտ. Ամ. Է14)*:

Նշենք նաեւ, որ Սողոմոն արքայի մահվանից հետո (Ք. ծ. ա. 954 թ.) հրեական տասը ցեղերը՝ Հերոբովամի առաջնորդությամբ, ապստամբում են Սողոմոն թագավորի որդու՝ Ռոբովամի (Ք. ծ. ա. 954–937 թթ.) դեմ, չեն ընդունում նրա իշխանությունը. վերջինս գահակալում էր Երուսաղեմում, եւ նրան են ենթարկվում միայն Հուդայի եւ Բենիամինի ցեղերը (այս մասին տես *Գ Թագ. ԺԲ):* Ըմբոստ եւ ապստամբյալ ցեղերից ձեւավորվում է Իսրայելի թագավորությունը, որի առաջին արքան դառնում է Հերոբովամ Ա-ն (Ք. ծ. ա. 953–931 թթ.): Նրա գահակալության շրջանում իսրայելցիները, հեռանալով ճշմարիտ հավատից, ուրանալով իրենց հայրերի Աստծուն, երկրպագում էին կուռքերին: Հերոբովամ Ա-ն մտավախություն ուներ, որ իսրայելցիները, տոներին գնալով Երուսաղեմ՝ Աստծո Տաճար, աստիճանաբար կմիանան հրեական երկու ցեղերին եւ կմերժեն իր տիրապետությունը: Ուստի իր իշխանությունն առավել ամրապնդելու նպատակով նա ամեն կերպ փորձում էր իսրայելցիներին հեռացնել հայրենի հավատից: Արքան հրամայում է ձուլել ոսկյա երկու հորթ. նա հստակ գիտակցում էր, որ այդպես կարող է մոլորեցնել ժողովրդին…

Շարունակությունը՝ էջ 6

Երեւանի հիմնադիր Արգիշտի արքայի, Ռուսա 2-րդ Հայորդու եւ հարակից հարցերի մասին

2016 թվին ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդեսի» №3-ում (էջ 178–196) Երվանդ Գրեկյանը հրապարակել էր մի հոդված՝ «Արգիշտի I արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ» վերնագրով, որի նպատակն էր, ի միջիայլոց, անհիմն համարել 2018 թվականին սպասվող՝ Երեւանի հիմնադրման 2800-ամյա հոբելյանը՝ այն պատճառաբանությամբ, իբր 1968 թվին հիմնադրման տարեթիվը հաշվարկած նախորդ ուրարտագետները Քրիստոսից առաջ եւ Քրիստոսից հետո եղած մեկական տարիներն անհիրազեկությամբ 2 տարի են հաշվել, ուստի իրական հոբելյանը պետք է լրանա 2019 թվին: Եվ այս առիթով կանադացի ասսուրագետ Քըրք Գրեյսոնի շատ կասկածելի ուսումնասիրությանը հետեւելով՝ մեր հայրենի ուրարտագետը բազում անհիմն պարտություններ է վերագրում Ուրարտուի հզոր արքային՝ որեւէ պատվի չարժանացնելով ապագա ամենայն հայոց մայրաքաղաք Երեւանի հիմնադրին: Այս եւ այլ հարակից հարցերին էր նվիրված 2018 թվի հունիսի 8-ին «ԱԶԳ» շաբաթաթերթում իմ տպագրած «Երեւանի հիմնադիր Արգիշտի I արքային հանիրավի նսեմացնելու մի ձախողված փորձ» հոդվածը, որտեղ ուշադրություն եմ հրավիրել այն փաստի վրա, որ Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ գրեթե 10 տարի մղվող կատաղի պայքարը Մանա երկրին տիրելու համար էր: Այդ երկիրն առաջին անգամ նվաճել էր Մենուա արքան, եւ պայքարն ավարտվեց Արգիշտիի հաղթանակով: Դա համոզիչ վկայություններով ցույց են տվել ուրարտական արձանագրությունների անխոնջ հայտնաբերող ու վերծանող Կարլ Ֆրիդրիխ Լեհման-Հաուպտը եւ Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը:

Հույսը դնելով այն բանի վրա, որ շատ ընթերցողներ կարդացած չեն լինի իմ վերոհիշյալ հրապարակումը, պարոն Գրեկյանը մեկ շաբաթ հետո ինձնից փախցրած վերնագրով՝ «Գիտական հրապարակումը նսեմացնելու մի ձախողված փորձ» պատասխան հոդվածում, որն ամոթ է նույնիսկ «գիտական» անվանել, Արգիշտիից հետո, գիտնականին ոչ վայել տակտով հիմա էլ թիրախավորում է իմ անձը:

Զարմանալին այն է, որ Գրեկյանը ոչ միայն 2016 թվի «ՊԲՀ»-ում տպագրած հոդվածում, այլեւ «ԱԶԳ» թերթում իմ դեմ գրած պատասխանում, կարդալով Մանա երկրի համար Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ մղված երկարամյա կռիվների մասին իմ հաղորդածը, անհասկանալի պատճառով ծպտուն անգամ չի հանում, որ 2002 թվին պաշտպանած իր թեկնածուական ատենախոսությունը նվիրված է եղել հենց Մանայի թագավորության պատմությանը: Օդում կախված է մնում այս հարցը՝ ի՞նչ է պաշտպանել Գրեկյանը այս թեկնածուական ատենախոսության մեջ, եթե Ուրարտուի եւ Ասորեստանի երկարամյա բախումների իսկական պատճառը Մանա երկիրն էր, որի մասին նա ափիբերան լռում է, փոխանակ իբրեւ հետազոտող՝ ինքը պարզաբաներ այս հարցը՝ գոնե իմ մանրամասն քննարկած այդ խնդրի առնչությամբ, եթե նույնիսկ նախկինում ծանոթ չի եղել Լեհման-Հաուպտի եւ Ադոնցի վկայություններին: Եվ ես հիմա ստիպված եմ նրա փոխարեն ինքս պարզաբանել ընթերցողներին այդ հարցը:

Բերեմ քաղվածներ նրա թեկնածուական ատենախոսությունից. «Ասորեստանյան բանակի հարձակումն ավարտվել է ծանր պարտությամբ եւ մարդկային մեծ կորուստներով» (էջ 66) – «Արգիշտի I-ը, արձանագրած հաջողություններից հետո, ամենայն հավանականությամբ ձգտել է վերջնական ավարտի հասցնել իր նախորդների սկսած գործը՝ վերացնել մերձուրմյան երկրների եւ, առաջին հերթին, Մանայի ենթակա պետականությունը՝ երկիրը վերջնականապես կցելով Ուրարտուին» (էջ 68) – «Այսպիսով, վեցամյա պատերազմում հյուծված Մանայի թագավորությունը, չկարողանալով շարունակել պայքարը, վերստին ընկավ Ուրարտուի գերիշխանության տակ» (էջ 74): Գրեկյանն իր թեկնածուական ատենախոսության մեջ նույնիսկ բերում է ասորեստանյան բանակի թուրթան (գլխավոր հրամանատար) Շամշի-իլուի խոստովանությունը «սարսափազդու Արգիշտիի» մասին. «Երբ ուրարտացի Արգիշտին, որի անունը սարսափազդու է, ինչպես ծանր հողմ, որի ուժերը լայնածավալ են ... նրա ողջ զորքը լեռների միջեւ մերձեցավ» (էջ 66, ծանոթ. 284):

Այնուհետեւ հաջորդում է եւս մի ենթագլուխ (էջ 75–84). «Մանան ուրարտական գերիշխանության տարիներին», որ դարձյալ վերաբերում է Արգիշտի I-ի գահակալության շրջանին: Վերը բերված քաղվածները լիովին հաստատում են հենց այն տեսակետները, որ ես վկայակոչել եմ Լեհման-Հաուպտի եւ Ադոնցի աշխատություններից:

Ցավոք, «ՊԲՀ»-ի հոդվածում, որտեղ դոկտոր Գրեկյանը հանիրավի նսեմացնում է Արգիշտի արքային, նշույլ անգամ չի մնացել թե՛ Հարությունյանի ղեկավարած ատենախոսությունից եւ թե՛ նրա ղեկավարած աշակերտից:

Տպավորությունս այնպիսին է, կարծես նշանավոր ուրարտագետ Նիկոլայ Հարությունյանի ղեկավարությունից քաշվելով՝ ինքը հարկադրված է եղել անդրադառնալ ուրարտա-ասսուրական պատերազմում Արգիշտի I արքայի հաղթական ճակատամարտերին: Իսկ ներկա պատասխան հոդվածում նա անտեղյակ ընթերցողներին փորձում է բանասացի պես համոզել, թե Արգիշտին «լքել է իր ճամբարը եւ անհետացել՝ եզակի ձի հեծած», ճիշտ այնպես, ինչպես Սարգոն II-ն էլ մ. թ. ա. 714 թվին սուտ լուր էր տարածում, թե Ռուսա I-ը մի մատակ ձիով փախավ: Այդպես էլ Փավստոսի «Բուզանդարանում» Հայոց երկիր ներխուժած թշնամի զորավարներին ու թագավորներին անարգելու համար վրեժխնդիր պատմիչը բոլորի մասին գրում է, թե մի ձիով կամ «պեշասպիկ» փախչելով՝ հազիվ փրկեցին իրենց գլուխը:

Փաստորեն, դոկտոր Գրեկյանը 180 աստիճանով երես է դարձրել թեկնածու Գրեկյանից: Այստեղից էլ այն բոլոր շինծու պարտությունները, որ, ինչպես ասվեց, ասսուրագետ Գրեյսոնին հետեւելով, հաղթական Արգիշտի արքայի գլխին սարքում է դոկտոր Գրեկյանը՝ հակառակ թեկնածուական ատենախոսության մեջ իր ներկայացրած Արգիշտիի հաղթանակների:

Ի՞նչն է ստիպել Գրեկյանին հիմնովին հրաժարվել իր թեկնածուական ատենախոսությունից, եւ ո՞ւմ է տվել նա «հրաժարիմք ի սատանայէ» երդումը, երբ այդ ատենախոսությունը պերճախոս ձեւով կարող էր նրան արդարացնել Արգիշտի արքային

նսեմացնելու իմ մեղադրանքից: Ինչեւէ, Արգիշտի արքային նսեմացնող իր վերջին ուսումնասիրությամբ նա գալիս է լրացնելու հայրենական որոշ պարտվողական գիտնականների այն շարքը, որոնք հեղինակել են «Մեզ անծանոթ Ավարայրի ճակատամարտը», «Մամիկոնյանների կործանարարդերը հայ ժողովրդի պատմության մեջ», «Եղիշեի ստահոդ պատմությունը» եւ նման անարժեք գործեր:

Չեմ կարող անպատասխան թողնել Գրեկյանի հետեւյալ դիտողությունը. «Իր ընդարձակ անդրադարձի մի զգալի հատվածը նա (այսինքն՝ ես՝ քննադատողս) նվիրել է մի հարցի՝ փորձելով Դոհուկի (ճիշտն է Դեհոկ, ոչ թե Դոհուկ – *Ա. Մ.*) ասսուրերեն արձանագրությունը վերագրել Արգիշտիին՝ հետեւելով Է. Ֆորրերի եւ Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի շուրջ հարյուրամյա վաղեմություն ունեցող կարծիքներին»:

Շարունակությունը՝ էջ 8

ԱՍՏԾՈ ՄԱՐԳԱՐԵՆ

Սկիզբը՝ էջ 5

Չէ՞ որ հրեաները փարավոնի գերությունից ազատագրվելուց, Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից դուրս գալուց եւ Սեւ ծովն անցնելուց հետո, երբ հասել էին անապատ, ոսկե հորթ ձուլեցին՝ տարվելով կռապաշտության մոլուցքով *(հմմտ. Ելք ԼԳ)*:

Հերոբովամ Ա-ն հորթերից մեկը կանգնեցնում է Դան քաղաքում, իսկ մյուսը՝ Բեթելում: Այնուհետեւ ժողովրդին ասում է. «…բավական է մինչեւ Երուսաղեմ գնաք: Ահա քո աստվածները, ո՛վ Իսրայել, որոնք քեզ դուրս բերեցին եգիպտացիների երկրից» *(Գ Թագ. ԺԲ 28)*: Այսպիսով՝ իսրայելցիները կրկին գայթակղվում են կռապաշտությամբ: Չնայած Աստծո ուղարկած մարգարեները քարոզում, հորդորում էին ապաշխարել եւ վերադառնալ ճշմարիտ հավատին, սակայն իսրայելցիների ստվար հատվածն այդպես էլ չէր գիտակցում մեղքի ծանրությունը եւ դարձի չէր գալիս: Մի մասն էլ պաշտում էր երկնային Հորը՝ միեւնույն ժամանակ երկրպագելով ու զոհեր մատուցելով նաեւ չաստվածներին, եւ միայն քչերն էին ապաշխարում ու վերադառնում միակ Աստծո հավատին:

Բարձրյալի կողմից է ուղարկվում նաեւ Ամոսը: Աստված պատվիրում է նրան՝ «Դու գնա՛ եւ մարգարեացի՛ր Իսրայելի իմ ժողովրդի մասին» *(Ամ. Է 15)*: Եվ Ք. ծ. ա. մոտ 760 թ. Ամոսը հայրենի գյուղից գալիս է Բեթել, որը Իսրայելի թագավորության գլխավոր սրբավայրն էր:

Ամոս մարգարեն քարոզում է Ք. ծ. ա. 760–755 թթ., երբ Հուդայի թագավորությունում (կենտրոնը՝ Երուսաղեմ) գահակալում էր Օզիան (Ք. ծ. ա. 809–758 թթ.), իսկ Իսրայելի թագավորությունում (կենտրոնը՝ Սամարիա քաղաքը)՝ Հերոբովամ Բ արքան:



Այս ժամանակահատվածում հարեւան Ասորեստանը դադարեցնում է ռազմական գործողություններն Իսրայելի թագավորության դեմ: Թուլանում է նաեւ Եգիպտոսի թագավորությունը: Հերոբովամ Բ-ն կարողանում է նվաճել Սիրիան, Մովաբը եւ Ամոնը՝ այդպիսով ընդարձակելով իր տերության սահմանները:

Պատմական սկզբնաղբյուրների վկայությունների համաձայն՝ վերականգնվում են Սողոմոն արքայի օրոք հաստատված սահմանները: Հերոբովամ Բ-ի օրոք՝ Ք. ծ. ա. 787–747 թթ., Իսրայելի, այսինքն՝ Հյուսիսային թագավորությունը խաղաղության, քաղաքական եւ տնտեսական զարգացման ու բարգավաճման մի շրջան էր ապրում: Հարեւան երկրների հետ մշտական առեւտուրը նպաստում էր երկրի տնտեսական առաջընթացին եւ հարստացմանը, սակայն այդ միջոցների տերն էին դառնում արդեն իսկ հարուստները: Ընչազուրկ խավը տառապում ու կեղեքվում էր. հասարակության մեջ կար ծայրահեղ բեւեռացում:

Ահա այս պայմաններում, ասես արտասովոր որոտ, հնչում է Ամոս մարգարեի քարոզը Արարչի արդարության մասին: Մարգարեն հստակ մատնանշում է հասարակության բարոյական անկումը, առկա մոլորություններն ու գայթակղությունները, ամբարտավանությունը եւ անպարկեշտությունը, հայրերի Աստծուց ու հայրենի հավատից հեռացումը, ուրացումը, այլ խոսքով՝ բոլոր մեղսագործությունները, որոնց բացը, գոյացրած վիթխարի անդունդը չէին կարող լցնել տնտեսական զարթոնքն ու առաջընթացը:

Նշենք նաեւ, որ Հերոբովամ Բ արքան շարունակում էր իր նախորդի եւ անվանակցի՝ Հերոբովամ Ա-ի ընթացքը՝ պաշտելով կուռքերին, զոհեր մատուցելով ու երկրպագելով ոսկեձույլ հորթերին:

Այս ժամանակ անց էին կացվում աշնանային տոնակատարությունները: Եվ ահա ամբոխի առջեւ, որը եկել էր երկրպագելու Հերոբովամ Բ-ի հրամանով կանգնեցված ոսկեձույլ հորթին, Ամոս մարգարեն պատմում է իր տեսիլքը ադամանդի մասին *(հմմտ. Ամ. Է 7–9)*:

Փաստորեն՝ Ամոսը մարգարեանում է Պաղեստինի սարսափելի երկրաշարժից երկու տարի առաջ ու այս մասին եւս կանխասում է: Անտիկ շրջանի պատմիչների, այդ թվում նաեւ ազգությամբ հրեա Հովսեփիոս Փլավիոսի (Ք. հ. 37 – մոտ 100) հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Պաղեստինի երկրաշարժի պատճառն այս էր. Հուդայի թագավորության Օզիա արքան, ընկնելով հպարտության մեղքի մեջ, համարձակվում է մտնել Աստծո Տաճարի Սրբության Սրբոց եւ խունկ վառել խնկարկության սեղանի վրա, ինչը միայն օծյալ քահանային էր թույլատրված: Երբ քահանաները փորձում են դիմադրել ու կանգնեցնել արքային, նա սպառնում է, որ մահվան կդատապարտի վերջիններիս, ահա այդ պահին էլ սկսվում է ահավոր երկրաշարժ Երուսաղեմում եւ ողջ Պաղեստինում: Այս երկրաշարժի հետեւանքով ոչ միայն ավերվում են բազմաթիվ շինություններ, այլ նույնիսկ որոշ լեռներ են տեղաշարժվում: Տաճարի տանիքը «որոտում է», եւ գոյացած ճեղքից պայծառ լույս է ընկնում Օզիայի դեմքին. նրա ողջ մարմինը ծածկվում է բորոտությամբ: Այսպիսով Աստված պատժում է ամբարտավան ու պիղծ տիրակալին: Նշյալ երկրաշարժի մասին կանխասում է նաեւ Զաքարիա մարգարեն *(տե՛ս Զաք. ԺԴ 5)*:

Շարունակելի

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Հայոց լինելության խորհուրդը

Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպում

Սկիզբը՝ թիվ 7, 9

Վիպասանն ընդհանրություններ է ստեղծում նրա եւ Կարոյի միջեւ: Վերջինս նույնպես զինված պայքարի կողմնակից է, նա զենքի է կոչում հայրենակիցներին՝ վրեժից դրդված: Թեկուզ նահատակվել, բայց անպայման պետք է վրեժ լուծել ջարդարարներից: Այսպես է դատում Կարոն: Այնինչ Փառենը կարծում է, որ պետք է կռվել, զենք վերցնել՝ ապրելու համար: «Կարոն ուրիշ մարդ է, շոյում է զենքը, գգվում, ասես սիրում է իր երեխային: Համաձայն է եւ Փառենի, եւ Արամի հետ: Եղեռնի ժամանակ կորցրել է իր մեծ գերդաստանի բոլոր անդամներին: Կվերականգնե՞ն Զեյթունը, ուրեմն պետք է վրեժ լուծել թշնամուց: Չե՞ն վերականգնի, էլի պետք է վրեժ լուծել: Հայը ջնջվում է երկրագնդի երեսից, թող ջնջվի, բայց ոչ անվրեժ: Կռիվ է պետք, կռիվը սրբազան բան է» *(նույն տեղում, էջ 11)*:

Փառենը մտովի պատկերացնում էր ձիու բաշի նմանվող Թուրքիայի քարտեզը: Հարավից մինչեւ ձիու մեջքը՝ Անատոլ–Ադանա, Ֆրանսիան է վերցրել, այնտեղից մինչեւ Դարդանել՝ Անգլիան: Ցարական Ռուսաստանն էլ տարածքներ գրավելու մեծ ցանկություն ուներ:

Հայ ժողովուրդը պետություն չունի, հետեւաբար չունի նաեւ դատ ու դատաստան: Կարոն վրեժ է լուծում անապատներում ընկածների, ավերակված բնակավայրերի, անհուն եւ անպատմելի տառապանքների համար: Նա նույնպես ցնորք ու անհեթեթություն է համարում առանց զենքի կռվելը: Անզեն ձեռքերով չեն կարող տնօրինել ժողովրդի ճակատագիրը: Պայքարի նպատակն էլ հենց դա էր, որ հայ ժողովուրդը կարողանար խաղաղ պայմաններում կատարել իր վար ու ցանքը, անվրդով կյանքով ապրել ու գոյատեւել: Կարոյի կարծիքով՝ վրեժը սուրբ զգացում է, անգամ եթե արդար էլ չլինի, չարերին պատժելն արդեն իսկ արդարություն է: Բացի դրանից՝ պատմության դասերը կարող են խորտակել մարդկանց քաջությունն ու մտածելակերպը: Իսկ պետականությունը զենքով են խլում եւ ոչ թե մուրացկանությամբ: Անհրաժեշտ էր ոտքի կանգնեցնել մի ամբողջ ժողովրդի, որ եղեռնից հազիվ մազապուրծ էր եղել: Ոչ միայն սնունդ, հագուստ, տուն ու ապաստան էր անհրաժեշտ ժողովրդին, այլեւ ձգտում, երազանք ու հույս: Առանց երազանքի հնարավոր չէր լինի ապրել:

Գրողը հայ ժողովրդի սխալներից մեկն էլ համարում է այն, որ չի կարողանում պատրանքը երազանքից զանազանել: Երազանքի համար ծրագրեր են ստեղծվում, խնդիրներ են մշակվում, հեռանկարներ են քննարկվում, աշխատում են ուղեղը, սիրտը, արյունը եւ երեւակայությունը, իսկ պատրանքը լոկ զգայարանների խաղ է:

Հոգեբանական հետաքրքիր անցումներով զարգացող կերպար է Արամը: Նա սկզբնապես պահանջում է զենքի փոխարեն բահ ու գրիչ վերցնել: Աշխատավոր մարդիկ մի կերպ էին փրկվել սպանդից, վերադարձել խաղաղ ապրելու ցանկությամբ եւ չէին ուզում բաժանվել վերագտնված հայրենիքից: «Իրենց Էրգրի գաղափարը կրող մարդը,– գրում է Ձ. Ավետիսյանը,– չի կարող դավաճանել, խորամանկել, չի կարող չատել ու չսիրել: Անարդարությունն ու կեղծիքը Էրգրի մարդկանց թշնամին են, Էրգրի լեզուն ու երգը անեղծ է, քաղցրահունչ: Նրա մարդիկ ազգերի բարձր ու հավասար սկզբունքների վրա հենվող եղբայրության ջատագովներ են: Երեխայի պես անկեղծ են, անմիջական ու նաեւ համառ, մեծի պես իմաստուն են եւ աշխարհանվեր, ինչպես Սանասարի որդին, թոռն ու ծոռը» *(Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք 2, եր., 1989, էջ 393)*: Նրանք գիտեին իրենց տեղը, կարոտել էին անգամ իրենց քանդված օջախներին: Կարոն հենվում էր նման մարդկանց վրա: Նա մտածում էր, որ իր ժողովրդին վրեժ ու զենք պետք չէ, այլ կառուցում, հաց ու օթեւան տալ փրկված մարդկանց՝ ձեռնամուխ լինելով հայրենիքի վերակառուցման սուրբ գործին: Մյուս կողմից՝ ժողովուրդը սիրում էր Արամին եւ լսում նրան: Արամը Զեյթուն էր վերադարձել՝ իր հետ բերելով տարագիրների մի մեծ բազմություն, որպեսզի շենացնի ավերակված երկիրը: Սակայն գրողը ցույց է տալիս, որ իրականությունն ստիպում է հերոսին փոխել իր տեսակետը՝ վերանայելով այն: Արամը համոզվում է, որ բահի կողքին հողագործը պետք է զենք ունենա: Նա տեսնում է, որ կռիվն անխուսափելի է: Զարթնում է նրա մեջ Ամանոսի առյուծը եւ հերոսաբար մարտնչում է՝ զոհվելով այն գիտակցությամբ, որ պետք է դաստիարակվել Մեծ եղեռնի ու անզեն ժողովրդի սպանդի փորձով, իմանալ զենքի հարգը եւ երբեք հույսը չկապել խարդախ թշնամու հետ կամ նայել օտար դիվանագետների խարդախ քաղաքականության կողմը:

Արամի մահվան բոթը Կյուրեղիների բերդ է կանչում բոլոր խմբերին: Բոլորն ափսոսում էին ոչ թե Մլեհ իշխանների ու հույն մարտիրոսների համար, այլ մեծ զորավարի համար, որն արժանի էր գերեզման ունենալու, բայց իր մահը գտավ ժայռերի մեջ. «Կորցրել էին Արամին, եւ սուգ էր: Կարմիր լեռան ստորոտում, Ձանգակասարի եւ Ֆռունզի մարտերում զոհվել էին քսան հոգի: Բայց Արամը... Որբացած էին: Սիմոնյանը, որին ղեկավար էին ընտրել, սիրելով, հարգելով, չէր լցնում այն պակասը, որը կոչվում էր հպարտություն, խիզախ կեցվածք, մարտական կոչ, ռազմի հրավեր...» *(Ս. Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին, էջ 277)*:

Վեպում հերոսներն արծարծում են բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել նաեւ ինքնուրույն պետականության գաղափարի ու եվրոպական տերությունների շահերի բախման հարցերը, որոնք դարձյալ քննվում են պատմական լույսի ներքո: Անգլիան եւ Ֆրանսիան ուզում էին Թուրքիան վերականգնել ու մղել բոլշեւիկյան Ռուսաստանի վրա, դրա համար էլ Քեմալի հետ գաղտնի բանակցություններ էին վարում: Սակայն Քեմալը դավաճանեց նրանց՝ դառնալով բոլշեւիկներին դաշնակից: Այնուհետեւ Անգլիան ու Ֆրանսիան հույներին դրդեցին արշավել Քեմալի վրա՝ նրան դաստիարակելու նպատակով:

Այսպիսով՝ գրողն ազգային ողբերգության, համաշխարհային պատերազմի չարիքների մեջ բեկում է մարդկանց ճակատագրերը: Կոտորածների, տառապանքների ու զրկանքների մեջ նա տեսնում է մարդու եւ մարդկայինի կործանումը: Խորապես լինելով մարդասեր, մի կողմից առիթ տալով թախծոտ վերապրումների՝ Ալաջաջյանը, մյուս կողմից, դատապարտում է բռնությունն ու կամայականությունը: Աշխատանքի, ստեղծումի, հողի եւ բնության պաշտամունքի, այդ հավիտենական արժեքների մեջ է հեղինակը տեսնում կյանքի իմաստը:

Ալաջաջյանը մեծ տեղ է հատկացնում ժողովրդի սովորույթների նկարագրությանը: Ազգագրական մանրամասներ քիչ է տալիս, սակայն նկարագրում է Զեյթունի ու զեյթունցիների վարքն ու բարքը, կենցաղն ու բնավորությունը: Կռիվներն ու կոտորածները շարունակվում էին, բայց ժողովուրդը շարունակում էր շինել ու կառուցել. «Խուճապ չէր երեւում: Առեւտուր էին անում, հերկում, հնձում: Մի ուրիշ աշխարհ էր այստեղ, եւ չէր երեւում, որ մի բլրաշղթա այն կողմ մահվան գուպար է մղում մի փոքրաթիվ խումբ ահագին թշնամու դեմ: Դեռ երեկ աշխարհը դատարկված էր թվում Փառենին: Կարծում էր ամենուր կրակոց է եւ արյուն, քաղց է ու ծարավ, ատելություն է ու մահ: Մինչդեռ հարսանիք է տեսնում եւ գինարբուք, կերուխում կա եւ զվարճություն» *(նույն տեղում, էջ 293)*:

Չնայած համընդհանուր ջարդին՝ հայ ժողովուրդը չի կորցնում իր անկոտրում հոգին եւ շարունակում է իր երթը դարերի մեջ: Նա շարունակում է իր արարման խորհուրդը, որպեսզի ապահովի սերունդների ապագան: Կռիվները ոչ թե կոտրում են ժողովրդի ոգին, այլ, ընդհակառակը, գոտեպնդում են բոլորին. «Թշնամու վայրահաչն ու կրակոցը կարթնացնեն բոլորին, եւ կյանքի ու մահվան մաքառման մեջ ոչ ոք չի մտածի հոգնածության կամ տառապանքի մասին: Թշնամին մոռանալ կտա ամեն մի անձնական վիշտ ու ցավ, վերք ու սպեղանի որոնելու մտահոգություն: Կգա թշնամին ու վրեժի ցասումը կբերի իր հետ, իսկ վրեժը այնպես հզոր է, ատելությունը այնպես թունոտ է, որ փոքր ցավերը կթաղվեն հոգում» *(նույն տեղում, էջ 289)*: Դեռ թարմ էր տեղի ունեցածը: Չէին գիտակցում իրենց կատարած անձնազոհությունը, հայրենիքի ու ժողովրդի փրկության համար արված մեծ գործը: Հերոսական անցյալ ու պատմություն ունեցող ժողովուրդը մի տասնամյակի ընթացքում երկու եղեռն տեսավ: Գրողն ունի իր հիմնավորումը կոտորածների վերաբերյալ. «Միայնակ թողեցին մեր ժողովրդին եւ Աստված, եւ մշակույթի պաշտպանները, եւ քաղաքակրթություն քարոզող Եվրոպան: Չկարողացանք գտնել մեր իսկական բարեկամին: Ժողովուրդները պիտի դաշնակիցներ ունենան, բարեկամներ ունենան, հենարաններ ունենան: Իսկ մենք... Որպես ժողովուրդ չներկայացանք ոչ աշխարհին, ոչ մարդկանց: Միշտ ներկայացանք որպես անհատ կամ անհատների խումբ, մի կուսակցություն, մի ընկերություն, բայց ոչ ժողովուրդ եւ ազգ...» *(նույն տեղում, էջ 288)*:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՎԱՆ ԻԼՅԻՆ

Կյանքի դառնությունները. ՁԱՆԳՐՈՒՅԹ

ԱՆԴ, ուր ամեն ինչ անմխիթար է թվում, մխիթարությունն արդեն իսկ դռան շեմին է կանգնած: Ակա՛նջ դիր. նա թակում է դուռը... Առանց հապաղելու բացի՛ր նրա առաջ դուռը, քանզի նա քեզ համար բերել է ամենից լավը՝ ինքն իրեն:

Ի՞նչը կարող է ձանձրույթից անմխիթար լինել: Ո՞վ գիտի՝ որտեղից է նա մեջտեղ գալիս: Կյանքը հանկարծ այնքան աղքատիկ, այնքան դժգույն, այնքան չորուցամաք, այնքան խորթ է դառնում: Ոչինչ ինձ չի հրապուրում, ոչինչ չի ուրախացնում, ոչինչ բարեհաճ չէ իմ նկատմամբ՝ ո՛չ աստ, ո՛չ անդ: Ամենուր միայն թոշնած խոտ, անբարեհամբույր քարեր ու կյանքի ամայի անապատ է սփռված: Ժամանակը դառնում է սին եւ ձգվում դանդաղորեն: Բովանդակ գոյությունն ինձ անտարբերության է մատնում, իսկ այն, ինչ պիտի զբաղեցնի իր տեղը, անորոշ է. եւ ես չգիտեմ, թե դա ինչ է... Ջուր եմ խավարում խարխափում. ոչ մի բան «այն» չէ: Բայց չէ որ ես մնացել եմ նույնը, ինչը նշանակում է՝ այս աշխարհն է դարձել ձանձրալի: Աշխարհը ճղճիմ ու ստոր է. չափազանց ճղճիմ ու չափազանց ստոր է ինձ համար. նա ոչինչ ի զորու չէ ինձ առաջարկել: Եվ միայն իմ ձանձրույթն է, որ հաստատում է իմ «հոգեւոր գերազանցությունը»...

Ո՜հ, թշվառ մխիթարություն: Սեփական գերազանցության բերկրանքը վայելելուն պես՝ ձանձրույթն իսկույն՛եւ անհետանում է, այնինչ նա հաստատվել էր մեկընդմիշտ, թանձրանալով՝ դարձել կենսական դիրքորոշում՝ աչքերիցդ հպարտություն ու դաժան հոգեկան ընկճվածություն մռայլորեն ճառագելով: Ոչ, ճշմարիտ սփոփանքը քո սեփական հոգու խորքերից է ծագում:

Տաղտուկի ակունքը աշխարհում չէ, այլ քո մեջ է: Առժամանակ հոգնել ես կյանքից. թո՛ղ, մի՛ հարկադրիր անձդ, սերն ինքնին կարթնանա... Գուցե չափազանց ուժգի՞ն ես սիրել: Թե՞ սերդ անպատասխան է մնացել: Թե՞ ինքդ ես քո սիրույն խանգարել: Թե՞ սիրո համար բավարար կամք չես ունեցել... Միով բանիվ՝ սերդ հեռացել է. նա երես է դարձրել քեզանից ու այլեւս իրեն չի ընծայում քեզ: Լռություն են պահպանում ցանկությունները, սիրտն այլեւս երգել չի կամենում ո՛չ Աստծուն, ո՛չ էլ կուռքին, եւ կարծես թե աշխարհը կորցրել է իր թովչանքը:

Հոգին առանց ցանկությունների է ակնդետ զննում աշխարհը, նայում է նրան առանց սիրո եւ այդ իսկ պատճառով էլ նրան խղճուկ ու տաղտկալի տեսնում:

Աշխարհը, սակայն, ամենեւին այդպիսին չէ. ինչպես միշտ, բնությունը լի է սքանչելի գաղտնիքներով, ինչպես միշտ, մարդը լեցուն է կրքերով ու ձգտումներով, շփոթված է, ընդսմին՝ աստվածային ու դժոխային, ընդհանուր առմամբ՝ աննման երեւույթ է: Իսկ աշխարհը միշտ այնպիսին է, ինչպիսին եղել է: Անգործունյա է միայն քո ցանկությունը. եւ դու այս անգործունեությունն անվանում ես «ձանձրույթ»: Իրականում, սակայն, ձանձրույթն ընդամենը շուրջբոլորը զննող հայացք է՝ սփոփանք, ապաքինություն, նոր ցանկություն, նոր արժեքներ գտնելու նպատակով: Եվ նախեւառաջ՝ առ մերձավորը, առ ժողովուրդ, առ Աստված նոր սիրո որոնում:

Հարկ է նախեւառաջ սեփական անձում տոկունությամբ ձանձրույթը կրելու արիություն գտնել. հանգի՛ստ այն տար, քանզի ինքնաբերաբար կանհետանա, երբ վերածնվի սերը:

Բայց դա պետք է չափազանց երկար չտեւի... Տաղտուկը պետք է կարճատեւ լինի, չէ որ ինքը՝ կյանքը, չափազանց կարճ է՝ երկարատեւ ձանձրույթի համար:

Տաղտկությունը մուգ ակնոցի է նման, որը աղավաղում է աշխարհը, սակայն հանգստություն պարգեւում սրտի աչքերին: Բայց բավ է. աչքն արդեն հանգստացել է, դեմ նետիր ակնոցը, որպեսզի կրկին խայտան արեգակն ու գույները: Նայի՛ր եւ ուրախությամբ տոգորվիր:

Մի առանձնահատուկ արվեստ կա՝ հաշտվել գոյության հետ, ստեղծագործաբար միավորվել նրա հետ, վերստին գտնել մեկնակետն ու անձնատուր լինել նրան:

Մի առանձնահատուկ արվեստ կա՝ կերպարանափոխվել ու հանապազ հնում նորը գտնել, արժեքավորը՝ թերեւս արժեզրկվածի, սիրելիս՝ անտարբերի մեջ:

Մի առանձնահատուկ արվեստ կա՝ հանապազ մի բան սիրել ու ցանկանալ: Եվ ինչ-որ էլ լինի դա, պիտի չհիասթափեցնի:

Այս է ուսուցանում ձանձրույթը: Այս է ձանձրույթը հաղթահարելու միջոցը: Այս է նրա մխիթարությունը. չէ որ տաղտուկը տեղով մխիթարություն է:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆԻ

Հայոց լինելության խորհուրդը...

Սկիզբը՝ էջ 7

Ինչպես վեպի հերոսներն են բնորոշում, որ եթե եղեռնը վայրագ թշնամու հրեշավորությունն է, ապա այն նաեւ հայ ժողովրդի նահանջն էր, ակամա երթը դեպի մահ: Դա թշնամու եւ մարդկության անարդարությունն էր:

Զոհվածներին տանում են գյուղաքաղաք՝ թաղելու: Նրանց մեջ էին Կարոն, Արամը, Նազարաթը, Արշակը եւ այլ հերոսներ, որոնք երազել էին միայն մի բան՝ հայրենիք: Հայրենասիրությունն այս բոլոր հերոսներին միացնող զգացում է: Բայց յուրաքանչյուր հերոսի պարագայում այն ունի յուրահատուկ դրսեւորում: Ժանգ Սեդրակը հաճախ կատակում է, որպեսզի համընդհանուր տխրության մեջ երբեմն ժպիտ երեւա, «պայթի փոքրիկ մի ծիծաղ»: Ծերունի Թումասը զենքեր է կռում, նռնենու շիվեր ու լոլիկի սածիլներ տնկում՝ ձուլված հողին, նրանից անբաժան՝ չիմանալով, որ մոխրացել է Զեյթունի վերջին մասնիկը, եւ ինքը վերջին զեյթունցին է, որ մնացել է հարազատ ու օտար հողում:

Ալաջաջյանի վեպը պատկերում է հայ ժողովրդի պատմության արյունոտ էջերից մեկը, անդրադառնում է ժողովրդական պայքարին, ուրվագծում հերոսների կերպարներ, որոնք անձնուրացությամբ պայքարում էին հայրենիքի ու ժողովրդի համար: Եվրոպական պետությունները շարունակում էին վարել իրենց ոչ հայանպաստ քաղաքականությունը, իսկ ջարդարար ու արյունարբու թշնամին կոտորում էր հայ ժողովրդին՝ չխնայելով անգամ մանուկներին ու ծերերին: Իրենց ամուսիններից հետ չէին մնում նաեւ զեյթունցի հերոսական կանայք: Արհավիրքներն իրենց կնիքն էին դրել անգամ նրանց դեմքերի վրա: «Պատերազմը ցնցոտներ թողեց մարդկանց վրա, եւ եղեռնը մերկությունը դարձրեց սովորական: Չէ՛, է՛, ջահել աղջիկը անգուլպա չէր ելնի տանից... Չպետք է նայել նրանց ոտքերին, չի ուզում ոտքեր տեսնել, գլուխը պտտվում է: Քանի՞ տարի է անցել: Չորս տարի: Չորս տարին ի՞նչ է: Բայց նրանք դուրս քաշվեցին տանից եւ նոր են վերադարձել: Չորս տարին ավելի ծանր էր, քան մի հազարամյակ, անցել է մի հազարամյակ... եղեռնը» *(նույն տեղում, էջ 3)*:

Գրողի ստեղծագործության հիմնական գաղափարն արտահայտված է հետեւյալ տողերում. «Եվ չգիտեն, որ ճշմարիտը միայն վրեժը չէ, որ դա պետք էլ չէ այս ժողովրդին ու բոլոր ժողովուրդներին: Վրեժը պատմություն չէ. դուրս է պատմությունից: Ինչ կառուցել ենք ու կառուցում ենք, կմնա սերունդներին: Վրեժը կռիվ չէ, վրեժը հայրենյաց պաշտպանություն չէ: Անձնական զգացմունք է, անզորի զգացմունք: Ժողովրդին պահպանելու համար պետք է հոգալ նրա պետքերը: Հաց տուր, որովհետեւ քաղցած է, հագցրու, որովհետեւ մերկ է, տուն տուր, որովհետեւ անօթեւան է: Մենք այժմ պիտի ապացուցենք, որ գոյատեւող ժողովուրդ ենք, կենսասեր, ապրել ենք սիրում եւ ստեղծագործել, մենք պիտի շարունակենք քայլել մարդկության պատմության միջով եւ ցույց տանք, որ սխալ էր ցեղասպանության գործադրումը մեզ վրա, վայրագություն ու բարբարոսություն էր մեզ նման աշխատասեր, շինարար ժողովրդին ոչնչացնելը...Եվ եթե ստեղծվի մեր պետականությունը, միասին ենք շենացնելու այս հողը, այս ավերակները» *(նույն տեղում, էջ 46)*:

Ոճիրի հանդեպ զայրույթը վսեմ զգացմունք է: Թուլամորթներն են միայն համակերպվում ոճիրին: Չարիքի դեմ պետք է զայրանալ: Բայց վրեժը չարին չարով հատուցելու պարզ ցանկություն չէ: Շատերը կարծում են՝ վրեժն ու արդարությունը հոմանիշ են: Գրողն այդ կարծիքին չէ: Հայի արյան մեջ վրեժ չկա: Ոճիրի հանդեպ մեր զայրույթը ոչ միայն բնական ու վսեմ, այլ նաեւ արդար զգացմունք է: Թշնամին իր արյունոտ գործին նայում է առանց զղջման ու հրճվանքով: Այս ամենը թուրքին դնում է բարոյական եւ իրավաբանական պատասխանատվության տակ: Սակայն որքան էլ խոր լինի հայի կսկիծը, նրա արդարության զգացումը, վրեժը դուրս է հայոց պատմությունից:

Հերոսներից յուրաքանչյուրն ուներ իր կողմնորոշումը, իր տեսակետը ժողովրդի գոյատեւման ու ապագայի մասին: Այդ կարծիքներն ինչքան տարբերվում են, բայց գալիս եւ մի կետում միավորվում են: Ի վերջո բոլոր հերոսներն էլ մի ցանկություն ունեն՝ խաղաղ ու անվրդով ապագա հայ ազգի համար. «Եվ չնստեցինք իրար մոտ, գլուխ գլխի չտվեցինք, չասացինք, որ ես պետականություն եմ ուզում, Կարոն՝ զենք եւ ազատ ճամփա բոլոր հայերի հետ, վարժապետը՝ մշակույթ եւ գիր, Միքայելը՝ բաց ճակատամարտ, խեւ վարդապետը՝ հավատ, համոզմունք ու գաղափար, եւ բոլորս էլ առանձին-առանձին սխալվում ենք, ճիշտ ենք միայն, երբ բոլորս միասին ենք, այսինքն՝ պետականություն, զենք, գաղափար ու համոզմունք, մշակույթ եւ գիր, այս բոլորը, այս բոլորը միասին պիտի լինեն ժողովրդի գոյատեւումը ապահովելու համար» *(նույն տեղում, էջ 266)*:

Հայն անցյալում արարել է գիր ու գրչություն, վանքեր ու տաճարներ, հարուստ արվեստ ու մշակույթ, ունեցել է պետականություն, պայքարել է հավատի, ազատության ու պետականության համար: Հայրենասերը նա է, ով չի անտեսում հայրենիքի շահը, ով օգնում է իր հայրենիքի բարգավաճմանը՝ ծառայելով նրա հզորությանը, ով քարը քարի վրա է դնում, հող հերկում, երգ հյուսում ու վերք բուժում: «Ո՞րն է այն ուժը, որ կարող է ամբողջ ազգը հավաքել իրար, բերել իր շուրջը, եթե ոչ ճշմարիտ հայրենասիրությունը, հայրենիք կերտող, հայրենիք պահող հայրենասիրությունը» *(նույն տեղում, էջ 12)*: Ահա այն զգացումը, որը միավորում է հայրենիքի ազատության համար մարտնչող վեպի բոլոր հերոսներին:

Այսպիսով՝ գեղարվեստական վերհուշի միջոցով Ս. Ալաջաջյանը պատկերում է 1915 թ. դեպքերն ու իրադարձությունները: Գրողը հետադարձ հայացքով անդրադառնում է հայոց Մեծ եղեռնին, խորհրդածում՝ ողբերգական այդ իրողության իրագործման հանցավորներ ճանաչելով ոչ միայն թուրք կառավարողներին, այլեւ եվրոպական դիվանագետներին: Ալաջաջյանի նշված վեպը կենցաղագրական երկ չէ, այլ հերոսապատում՝ ժողովրդի պատմության ու քաղաքական կյանքի գեղարվեստական դրվագներով: Ստեղծագործության բազմաթիվ էջեր գրված են մենախոսության ձեւով: Փառենի, Արամի եւ մյուս կերպարների ներքին մտորումները հաճախ հանդես են գալիս որպես պատմության, ժամանակի ու մարդկանց գնահատականներ, որպես իրադարձությունների քննություն ու վերաիմաստավորում: Նշված վեպը ոչ միայն Ս. Ալաջաջյանի, այլեւ սովետահայ արձակի նվաճումներից է: Գրողը ստեղծել է գեղարվեստական ինքնատիպ կոթող, արդիական հնչեղությամբ ներկայացրել Զեյթունի փառահեղ պատմության վերջին ու արյունոտ էջը՝ հույս փափագելով.

«-Տե՛ր, կեցո՛ դու զհայս եւ արա՛ զնոցա պայծառ»:

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Երեւանի հիմնադիր Արգիշտի արքայի, Ռուսա 2-րդ Հայորդու եւ հարակից հարցերի մասին

Սկիզբը՝ էջ 6

Նշանավոր արեւելագետ Ֆորրերի եւ Լեհման-Հաուպտի կարծիքները ես թարգմանել եմ գերմաներեն բնագրից՝ Լեհման-Հաուպտի երկու կարեւոր աշխատություններից, որոնցում հայ ժողովրդի եւ հայոց պատմության մեծ ջատագով Լեհման-Հաուպտը երկու դժվարին գիտարշավներով հայտնաբերել է Դեհոկի բարձունքին՝ Ասորեստանի մայրաքաղաք Նինվեից ընդամենը 100 կմ-ի վրա, Արգիշտի Ի-ի կանգնեցրած քարակոթողի երկլեզվյան արձանագրության դրվագը, եւ տասնյակ տարիներ շարունակ իր անդրադարձներով հաստատել Ֆորրերի բացահայտած Արգիշտի Ի-ի եւ նրա հեծելազորի աներեւակայելի պատմական սխրանքը՝ մինչեւ Նինվեի մատույցները հասնելու, Ասորեստանից նվաճած տարածքում երկլեզվյան քարակոթող կանգնեցնելու մասին:

Իսկ մեզ՝ ուսումնասիրողներիս համար բացառիկ արժեքավոր են նրանց հենց հարյուրամյա հնություն ունեցող գիտական վկայությունները եւ ոչ թե գերմաներենին անտեղյակ այսօրվա «գիտնականների» օդ տատանող, անապացույց ենթադրությունները, որոնց տողատակի հղումները նույնիսկ արտագրված են այլոց տողատակերից, սրանք էլ իրենց հերթին՝ ուրիշներից: Օրինակ՝ Գրեյսոնը տողատակում հղում է Լեհման-Հաուպտի գերմաներեն աշխատությունը՝ առանց կարդացած լինելու նրա գիտարշավի եզրակացությունը (Երվանդ Գրեկյան. Արգիշտի Ի արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ – ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», №3, 2016, էջ 182–183, ծան. 29, 30, 31): Այժմ կավելացնեմ, որ նույն կերպ վարվում է եւ Գրեկյանը՝ Գրեյսոնից բառբառ արտագրելով ոչ միայն նրա բերած ստահոդ փաստերը Արգիշտիի դեմ տարած հաղթանակի առթիվ Շամշի-իլուի կանգնեցրած երկու հսկայական առյուծների արձանների մասին, այլեւ նույն Շամշի-իլուին է վերագրում Դեհոկի (Գրեկյանը նույնիսկ Գրեյսոնից աղավաղված արտագրել է «Դոհուկ»՝ փոխանակ «Դեհոկ») բարձունքին Արգիշտիի հիմնած երկլեզվյան հաղթական կոթողը (այստեղ Գրեկյանը տողատակի 30-րդ ծանոթության մեջ Գրեյսոնից արտագրում է Լեհման-Հաուպտի աշխատությունը՝ դարձյալ առանց կարդալու վերջինիս գերմաներեն բնագիրը («Materialen zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens...», Berlin, 1907, S. 45sqq., Fig. 22.): Պարոն Գրեկյանն իրեն հարց չի տվել, թե ինչի համար պիտի Շամշի-իլուն իր մայրաքաղաքի մոտ կանգնեցրած քարակոթողի վրա ուրարտերեն արձանագրություն փորագրեր,– որպիսի այլ փաստ ասորեստանյան արձանագրությունների պատմության մեջ չի նշմարված: Իսկ Արգիշտիի այդ հաղթանակը, որ ձեռք էր բերվել Ասորեստանի մայրաքաղաքի մատույցներում, այնքան աներեւակայելի էր, որ Հին Արեւելքի պատմության մեջ շատ անակնկալներ տեսած Էմիլ Ֆորրերն անհավատալի հրաշք է համարում: Այս ամենը կոծկելն ինքնանվաստացում է ամեն մի հեղինակի համար: Մի՞թե այսքանից հետո դեռ տեղ է մնում, որ ես նսեմացնեմ իրեն: Եվ այս անգիտության արդյունքում Դեհոկի բարձունքին Արգիշտի Ի-ի կանգնեցրած քարակոթողը՝ ուրարտերեն եւ աշշուրերեն երկլեզվյան արձանագրությամբ, Գրեյսոնը եւ Գրեկյանը վերագրում են Ասորեստանի բանակի զորավար Շամշի-իլուին կամ Շամաշ-իլուին, որ նույնքան ստահոդ է, ինչքան Հյուսիսային Սիրիայում (Ասորիք) Շամշի-իլուի հաղթանակները հավերժացնող հսկայական զույգ առյուծները: Այստեղ հարկ եմ համարում նշել, որ պարոն Գրեկյանը կարծես լռելյայն հաշտվել է զույգ առյուծների վերաբերյալ իմ դիտողության հետ եւ այլեւս իր պատասխանում չի հիշատակում այդ փաստը:

Այն, որ առյուծը թագավորի խորհրդանիշն էր ոչ միայն Հին Աշխարհում, այլեւ ներկա դարաշրջանում, հայտնի էր նաեւ մ. թ. IV դարի պարսից Շապուհ II Երկայնակյաց արքային, որն իր զորքով հետապնդելով հույներին՝ Բյութանիայի ծովափին սյան վրա առյուծի արձան է դնել տալիս՝ թաթերի մեջ մի գիրք պահած, որ նշանակում էր «ինչպես առյուծը ամենահզորն է գազանների մեջ, այդպես է եւ պարսից արքան՝ թագավորների մեջ, իսկ մատյանը՝ հռոմայեցիների տերությունն է» – «քանզի առիւծ հզօր է ի գազանս, նոյնպէս եւ պարսկականն ի թագաւորս. եւ մատեան ժողովիչ է իմաստութեան, որպէս Հռոմայեցւոց տէրութիւնն» *(Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք Գ, գլ. ԺԸ, էջ 277)*:

Իմ բարեմիտ եւ անկեղծ դիտողություններից չարացած՝ արգո ուրարտագետը տեղի-անտեղի մեջտեղ է բերում ընթերցողիս կամ օգնականիս պարագան: Ի գիտություն նրան՝ պետք է հայտնեմ, որ ես ոչ թե մեկ, այլ մի քանի լավ ու վատ ընթերցողներ եմ ունեցել, որոնք հրաշալի գիտեին, որ նույնիսկ իմ դրած կետադրության նշանները ոչ ոք իրավունք չունի փոխելու, էլ ուր մնաց՝ որեւէ բառ: Այնպես որ ամբողջ կյանքում իմ գրածների գլխին կանգնած է եղել միայն իմ սեփական գլուխը:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցե՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 31.05.2019 թ.
Տպաքանակը՝ 1175